ՄԱՆԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
CHILD DEVELOPMENT FOUNDATION

Հասցե՝ Ռ. Մելիքյան 1, Երևան 0065
Հեռ՝ +374 60 491 001, +374 95 004 186
Կայքէջ՝ www.cdf.am
Էլ. փոստ՝ info@cdf.am

ՀՀ Արարատի մարզի
Վեղի համայնքի ղեկավար Գարիկ Սարգսյանին
Մանկական զարգացման հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար
Գայանե Հովակիմյանից

Ե-71/24

22 մարտ, 2024թ.

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

Մանկական զարգացման հիմնադրամը 2017 թվականից Արարատի մարզում իրականացնում է «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագիրը, ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ, որի շրջանակներում արդյունավետորեն համագործակցում է Վեղի խոշորացված համայնքի համայնքապետարանի աշխատակազմի հետ: Իսկ երեխաներին ծառայությունն է մատուցում 2023 թվականի դեկտեմբեր ամսից՝ <<Ապահով տարածքների և համայնքահեն մեխանիզմների միջոցով տեղահանված երեխաների և նրանց խնամակալների սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում>> ծրագրի շրջանակներում, Յունիսեֆի աջակցությամբ՝ Մշակույթի տան շենքում:

Այս ամիսների ընթացքում ծրագրի շրջանակներում երեխաներին մատուցվել է անհատական լոգոպեդի և հոգեբանի ծառայություններ, ինչպես նաև խմբային հոգեբանական դասընթացներ՝ ըստ երեխաների տարիքային բաժանման, նաև ծնողների համար հոգեբանական, ծնողավարման դասընթացներ:

Ծրագրի շրջանակներում մինչև օրս ծառայություն է ստացել 50 երեխա:
Ծրագրի շրջանակներում իրականացված գործողությունները և կարիքի գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ համայնքում կա մասնագիտական ծառայության անհրաժեշտություն: Ծառայությունները ընդլայնելու և երկարատև կայունություն ապահովելու նպատակով հիմնադրամը դիմում է ինչպես պետական, այնպես էլ միջազգային ծրագրերի, որի շրջանակներում անվճար, սոցիալ-վերկանգնողական ծառայություններ կմատուցվեն երեխաներին և կաջակցի համայնքում մասանագիտական ներուժի զարգացմանը: Մանկական զարգացման հիմնադրամը շարունակում է համագործակցությունը Համայնքապետարանի հետ և դիմում է Ձեզ խնդրելով, առաջիկա ավագանու նիստերից մեկի ընթացքում քննարկել Մանկական զարգացման հինադրամին անհատույց տարածք տրամադրելու հարցը, երեխաներին մասնագիտական ծառայությունները տրամադրելու նպատակով:

Հարկ է նշել, որ Վեղի խոշորացված, ինչպես նաև մոտակա համայնքներում չկա նմատատիպ մասանագիտական ծառայություններ մատուցող կենտրոն, և սույն կենտրոնի գործունեությունը կարևոր նշանակություն ունի համայնքի երեխաների համար:

Հարգանքով՝

ՎԵՂՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏՄ N Մ 2389
«25» 03 2024թ.

ՄԱՆԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
CHILD DEVELOPMENT FOUNDATION

Հասցե՝ Ռ. Մելիքյան 1, Երևան 0065
Հեռ՝ +374 60 491 001. +374 95 004 186
Կայքէջ՝ www.cdf.am
Էլ. փոստ՝ info@cdf.am

ՀԻՄՆԱԴՐԱՄ FOUNDATION 01845834

Գայանե Հովակիմյան

Մանկական զարգացման հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար